ՄԻ ՊԱՀ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻՆ
ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՕՐՀՆԵՑ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇԸ

Հունվարի 28-ին՝ ՀՀ զինված ուժերի հիմնադրման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց ՀՀ պաշտպանության նախարարություն՝ մասնակից լինելու նախարարությանը ՀՀ զինված ուժերի մարտական դրոշի հանձնման արարողությանը:

ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ զինված ուժերի մարտական դրոշը, իբրև խորհրդանիշ հայոց բանակի փառքի ու հաղթանակի, նախարարությանը հանձնվեց զինված ուժերի 10-ամյակի առիթով: Հանդիսավոր պայմաններում դրոշը հանձնվեց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին:

Արարողության ընթացքում Նորին Սրբությունն աղոթք բարձրացրեց առ Աստված զինված ուժերի համար և օրհնեց մարտական դրոշը:

Հանդիսության ավարտից հետո Վեհափառ Հայրապետն ու ՀՀ Նախագահն ուղղվեցին դեպի Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու զոհված ազատամարտիկների հիշատակին և ծաղիկներ դնելու նրանց շիրիմներին: Եռաբլուր էին եկել նաև ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, ՀՀ և ԼՂՀ բարձրաստիճան պետական այրեր, զինվորականներ, իրենց խոնարհումը բերելով Անհայտ զինվորի և ՀՀ պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյանի շիրիմներին: Այստեղ Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց հայրենյաց պաշտպանության համար ընկած մարտիկների հոգիների խաղաղության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ